ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# ՈՒ Ղ Ե Ր Ձ

«16» ապրիլի 2024 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր Ոստիկանի մասնագիտական տոնն է:

Այս տոնը ոչ միայն մասնագիտական օր է, այլև մեր պետականության ամրապնդման, ներքին անվտանգության ապահովման երաշխիք: Ոստիկանության համակարգի հարգելի աշխատակիցներ, սրտանց շնորհավորում եմ Ոստիկանության աշխատողի օրվա առթիվ: Ձեր աշխատանքն անգնահատելի է, մեր շնորհակալական խոսքն անչափ քիչ՝ ձեր աշխատանքի ողջ բարդությունն ու կարևորությունը արտահայտելու և գնահատելու համար: Ոստիկանության Ստեփանավանի բաժինը մեր քաղաքի անվտանգության, հասարակական կարգի պահպանման գլխավոր երաշխավորն է: Մենք ուժեղ ու ապահով ենք ձեր աշխատանքի շնորհիվ: Ձեզ աշխատանքի մեջ մաղթում եմ անփորձանք ծառայություն, առողջություն և բարօրություն: Խոնարհումս հայրենիքի պաշտպանության համար անմահացած ոստիկաններին. հավե՛րժ փառք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ